

Գ. Խ. Սեփանյան

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միքայել Նալբանդյանը Կ. Պոլսում եղել է կարճ ժամանակով, բայց եղել է քաղաքական որոշակի ծրագրով, Դրա համար էլ թե՛ առաջավոր հայ մտավորականության և թե՛ պահպանողական հոսանքի կողմից նա չի դիտվել որպես մի զբոսաշրջիկ. նրա շուրջը Զմյուռնիայում և Պոլսում ստեղծվել է համակիրների ու հակառակորդների մի մեծ շրջան:

Վերահաս դեպքերը՝ Նալբանդյանի ձերբակալությունը Ռուսաստանում, «Մեղվի» և «Մյունատևի» պարբերական խափանումները և խմբագիրների հալածանքը, հնարավորություն չեն տվել խորացնելու սկսված քաղաքական աշխատանքը: Բայց Նալբանդյանը Պոլսում ցանկ է առաջավոր գաղափարներ, որոնք զարմանալի արագությամբ աճել են: Այդ գաղափարների մասին իր ժամանակին շատ է խոսվել, բայց հասկանալի պատճառով՝ քիչ է զրվել: Հայտնի էր միայն Նալբանդյանի ու Սվաճյանի, Նալբանդյանի ու Ս. Թազվորյանի մոտիկությունը: Վերջին տարիներս բանասերներ Ա. Հովհաննիսյանի, Ա. Ինճիլյանի, Ա. Մակարյանի, մասամբ և մեր պրպտումների շնորհիվ ավելացան մի քանի նոր անուններ, ինչպես բժիշկ Հ. Քյաթիպյան, Ա. Հայկունի, Մ. Մամուրյան, Մ. Ավատյան և ուրիշներ: Այժմ գիտենք բավականաչափ մեծ թվով մարդկանց, որոնք Պոլսում «Մեղվի», Զմյուռնիայում՝ Հաշտենից բնկերության շուրջը համախմբված՝ հետաքրքրվել են Նալբանդյանի գաղափարներով, աշխատել են դրանց տարածման ու կենսագործման ուղղությամբ: Սրանց մի մասին Նալբանդյանը տեսել է, զրուցել նրանց հետ, հյուրընկալվել նրանց կողմից, նրանց հետ բաժանել իր շատ մտքերը, նամակներ գրել և այլն:

Բայց կա կիսաառեղծվածային մի դեմք, որի և Նալբանդյանի կապերը մասին քիչ բան գիտենք, բայց որին Նալբանդյանը մեծ հարգանքով է վերաբերվել:

Այդ անձնավորությունը հաշիկ Օտյանն է, երգիծաբան Երվանդ Օտյանի հայրը: Հայտնի է, որ Միքայել Նալբանդյանը իր ամենանշանավոր ստեղծագործություններից մեկը՝ «Կրիտիկա Սոս և Վարդիթերի» երկը, որը գրել է Պետրոպավլովսկի բերդում, նվիրել է «սիրեցյալ եղբոր Խ. Պ. Օտյանին»: Սա շատ ուշագրավ փաստ է: Ի՞նչպես է պատահել, որ թե՛ Ռուսաստանում և թե՛ Արևմուտքում այնքան մտերիմներ, գաղափարակիցներ ունեցող Նալբանդյանը, որ նամակագրությամբ կապված է եղել 50-ից ավելի մարդկանց հետ, իր այդ կարևոր ստեղծագործությունը նվիրում է գրեթե մեզ անծանոթ մի անձնավորության, որը համեմատյալ դեպս հայ հասարակական կյանքում չի կատարել այն դերը, ինչ կատարել են շատ ուրիշներ՝ Նալբանդյանի ծանոթներից:

Հաշիկ Օտյանի և Նալբանդյանի գաղափարական կապի մասին մեր օրերում առաջինը խոսել է ակադեմիկոս Ա. Գ. Հովհաննիսյանը՝ Միքայել Նալբանդյանի «Անտիպ երկեր» հատորին կցած իր ծանոթագրությունում: Նա

գրում է. «Այն հանգամանքը, որ նախնայական «սիրական եղբայր է կոչում նրան և նրան նվիրում իր «Սոս և Վարդիթեր» կրիտիկան, ենթադրել է տալիս. թե զաղափարական մտերմություն պիտի եղած լինի նրանց միջև: Անհավանական չէ, որ Օտյանը ևս եղած լինի նախնայականի Պոլսի բարեկամներից մեկը»¹:

Արխիվային երկու փաստաթուղթ, որոնք պահվում են Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում — և որոնց վրա մեր ուշադրությունը հրավիրել է թանգարանի գիտաշխատակից Զ. Միրզաբեկյանը, — բավականաչափ լույս են սփռում նախնայականի և հաշիկ Օտյանի զաղափարական կապի վրա, և հաստատում Ա. Գ. Հովհաննիսյանի ենթադրությունը: Այդ փաստաթղթերն են հաշիկ Օտյանի երկու նամակները՝ ուղղված Հովհաննիսյանին և Մկրտչյանին:

Բայց նախ պարզենք, լիե ով է հաշիկ Օտյանը: Նա անշուշտ անհայտ անձնավորություն չէ, ունեցել է մշակույթային որոշ գործունեություն: Մեկն է 1842 թ. Կ. Պոլսում, «ժամանակին էն հառաջադիմասեր անձերեն մին» հանդիսացող Պողոս Օտյանի (1795—1862) ընտանիքում, ինչպես վկայում է Պողոս Օտյանի կենսագիրներից Վ. Զարդարյանը: հաշիկը փոքր հասակից ստացել է ընտանեկան հիմնավոր կրթություն: Հայրը՝ Պողոս Օտյանը իր տունը դարձրել էր մշակույթային մի կենտրոն, որտեղ անգամ թատերական ներկայացումներ էին տրվում, այն էլ Ռասինի, Կոռնելի, Վոլտերի, Մոլիերի նման դասական հեղինակների երկերի բեմադրությամբ:

Այդ ընտանիքի երեխաները հատուկ ուսուցիչների միջոցով սովորել են մի քանի լեզուներ, հաշիկը ուսումը շարունակել է Փարիզում, կարճ ժամանակ սովորելով այնտեղի Հայկազյան վարժարանում, որն ավարտում է 1854 թ. և նետվում հասարակական ասպարեզ: 1850-ական թվականների վերջերից նրա տնունը երևում է հայկական մամուլում: «Մասյաց աղավնի» պարբերականում լույս է տեսնում նրա թարգմանություններից մեկը՝ «Բանալի բնական պիտելյաց» վերնագրով:

Վերադառնալով Կ. Պոլիս, մոտիկից կապվում է «մեղվականներին»՝ այդ միջավայրում էլ ծանոթանում է Միքայել Նախնայականի հետ, խանդավառվում նրա զաղափարներով: Պետք է ենթադրել, որ նա Նախնայականի հետ ծանոթացել է ոչ թե Նախնայականի առաջին անգամ Պոլիս գալու օրերին, այլ՝ երկրորդ այցելության ժամանակ, քանի որ Նախնայականը իր հնդկաստանյան ուղևորության շրջանում Օտյաններից և ոչ մեկին նամակ չի ուղարկել, զոնե այդ մասին որևէ նշում չկա նրա հայտնի ծոցատետրում:

Մինաս Զերազը իր մի հոդվածում վկայում է, որ Մ. Նախնայականը Կ. Պոլսում գտնված ժամանակաշրջանում «օրերով հյուրընկալվել է» Օտյանների հայտնի ընտանիքում: Նկատի ունենալով, որ Օտյանների տան ավագը՝ Պողոս Օտյանը այդ թվերին ապրում էր խոր ծերության հասակում, կյանքի վերջին օրերը (մեռել է 1862 թվին), պետք է ենթադրել, որ Օտյանների ընտանիքում Նախնայականի զաղափարներով ամենից շատ խանդավառվել է հաշիկ Օտյանը, և նա է Նախնայականին հրավիրել իրենց տուն, հյուրընկալել մի շաբաթ: Այս մտերիմ միջավայրում Նախնայականը ճանաչել է հաշիկ Օտյանին:

1 Միք. Նախնայական, «Անտիպի երկեր», էջ 753:

2 Շարասան, Թուրքահայ բեմը և իր գործիչները, էջ 23:

3 Բաղմավես, 1917, էջ 392:

նրա մեջ տեսել, ըստ երևույթին, թե բնավորության իր համար ընդունելի գծեր և թե գաղափարական մոտիկություն:

Ի՞նչ հարցերի մասին են խոսել նրա հետ, ի՞նչ ծրագրեր կազմել. մեզ հայտնի չէ, հայտնի է միայն, որ «Կոմս էմմանվելի ազնիվ ողին և բոցաշունչ ազատասիրությունը խոր տպավորություն գործեցին ունկնդիրներուն վրա. ինչպես լսած եմ բարեհիշատակ Գրիգոր Օտյանե» — գրում է Մ. Ջերագր⁴։ Եթե նախնական խոսակցությունները իրենց զգալիությունը և խորությունը հարցերում չեն ցուցաբերում, ապա «Կրիտիկան» չէր նվիրի նրան: Գուցե «Կրիտիկայում» բարձրացվող հարցերից մի քանիսի մասին նախնական խոսակցություններ ունեցել է դեռևս Պոլսում, այդ մտորումներին հաղորդակից դարձնելով ի. Օտյանին և այժմ, երբ դրանք գրի էին առնվում, անհրաժեշտ էր համարում նվիրել այն մարդուն, որը դրանց մասին ամենից շատ դիտելու և Գուցե ի. Օտյանն է հուշել նախնական խոսակցություն՝ կարգալ «Ազապի հիքեայեսի» գիրքը, որի մասին այնքան ջերմորեն խոսվում է «Կրիտիկայում»: Սրանք բոլորը ենթադրություններ են: Փաստն այն է, որ նրանք ունեցել են գաղափարական մոտիկություն:

Նախնական խոսակցություններից հետո նրա համախոհները գտնվում էին կատարյալ խանդավառության մեջ: Երբ Պոլսում լսվեց նախնական խոսակցության լուրը, նրա հակառակորդները՝ Տերոյենցի գլխավորությամբ, ապրեցին գերագույն հրճվածությամբ, բարեկամները՝ մեծ վիշտ. սակայն շթուլացավ նրանց պայքարը, շաստանեց նրանց հավատքը ապագայի նկատմամբ: Այս լավատես միջոցառում է, որ ստեղծվում էին գեղեցիկ առասպելներ՝ բանտից նախնական խոսակցության, անպարտ հռչակվելու, նորից Պոլիս վերադառնալու հնարավորության մասին: Ահա այս մտայնությունների վառ ցուցադրումներն են մեզ զբաղեցնող նամակները, որոնք միանգամայն ակնբախ են դարձնում նրանց հեղինակի՝ ինչպես Օտյանի գաղափարական սերտ կապը նախնական խոսակցության և տալիս են հնարավորություն՝ անելու որոշ ենթադրություններ:

Նամակներից առաջինը գրված է 1862 թ. սեպտեմբերի 10-ին և հետևյալն է.

«Ազնիվ և սիրելի բարեկամ:

Աշվրնիս ի լույս (Չամրոճիին ալ աշվրները բոռնա). մեր սիրելի և թանկագին բարեկամ նախնական խոսակցության վրա քանի մը շար շուններու բռնած անբաստանություններին անհիմն է եղեր և ոչ մեկ հանցանք մըն են գտեր վրան. իրեն բանտ երթալը սուտ է. հապա ամենայն պատվավոր կերպով տարեր են զինքը նախնական խոսակցության շրջանից: Հիմա ինքը ազատ է և դատաստանի տակ չէ: Խալիբյանը 30 հազար ռուբլի կուտա կոր, որ նախնական խոսակցության վրա կեղծ ամբաստանության վճիռը ջնջվի, որպեսզի ետքը զինքը ամբաստանողները ամբաստանության տակ չիյնան: Ինքզինքս շատ երջանիկ կը հասարիմ, որ այս ուրախագիտ լուրը կուտայ՝ քեզի «Մյունստրին» երեկ ժամը իննին բանտեն ելավ: «Օրագիրը» գոցվեցավ բոլորովին և քսան օսմանյան լիրա տուգանք վճարեց: Ուրիշ բան չկա գրելու, քիչ ժամանակ են նախնական խոսակցության Պոլիս գալն ալ քեզի կիմացնեմ, որ պաս դինքը տեսնես:

Մնամ ազնվությանդ անձնվեր

Խ. Պ. Օտյան

1862, սեպտեմբեր 10, Սկյուտար⁵:

⁴ Նույն տեղում:

Ավելի ուշագրավ է *Խ. Օտյանի* երկրորդ նամակը.

«Ազնիվ և սիրելի բարեկամ,

Աշվինիս լույս. մեր և բոլոր ազատասեր հայերուն. բար դառնա աչքերուն բիրը բոլոր ազատության թշնամիներուն: Ուրախ սրտիվ ու զվարթ դեմքով կուզեմ քեզի մեր ամենասիրելի քաղցրիկ նալբանդյանեն «Մեղվին» նամակ մը եկած ըլլալը: «Շատ չմնաց... կրսե ազնիվ ու վեհանձն նամակագիրը, վերջի՝ թելն ալ կը կտրվի և Մեղուխեշան (իրեն համար է) փառավոր հաղթանակով Մեծնոր խանի մեջ կերևի»: Ասկեց ապելի մեծ լուր մը չէի կրնար փափագիլ ունենալու և շատ երջանիկ եմ զայն քեզի հաղորդելուս.

Ազատություն գոչեցի թող որոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր երկաթ՝ թող դա վ ղնե թշնամին
Ես մինչ ի մահ կախաղան, մինչև անարգ մահու սյուն
Պիտի պոռամ, պիտ կրկնեմ, անդադար Ազատություն:

Կեցցե մեծն նալբանդյան, կեցցե նա ի պատիվ ազատության և ի պարծանս հայ ազգին: Չիքսրտին, շան սատակ ելնեն ու սատկելնեն ետքն ալ իբրե շան դիակ որդերու կերակուր ըլլան ամեն անոնք, որ թշնամի են նալբանդյանին և որուն ազատության լուրը որչափ մեզի ուրախություն, այնչափ անոնց ցավ ու տրտմություն կը պատճառե:

Չեմ կրնար այս միջոցիս սրտիս զգացածը գրով բացատրել, գուն կարող ես մակաբերել: Կեցցե ազատություն:

Անձնվերդ

Խ. Պ. Օտյան

2, սեպտեմբերի, 1864, Սկյուտար»:

Այս նամակի մեջ ամենից ուշագրավը Օտյանի հավաստիացումն է, թե «Մեղվին» խմբագրությունը նալբանդյանից ստացել է նամակ. Օտյանը նույնիսկ մեջբերում է կատարում այդ նամակից, թե նալբանդյանը շուտով բոլորովին ազատ կարձակվի և Մեղուխեշան, այսինքն Սվաճյանը ազատ համարձակ կարող կլինի պաշտպանել իր բարեկամին ու նրա զաղափարները:

Մինչև հիմա մեզ հայտնի էր, որ Միք. նալբանդյանը բանտում դրել է իր հայտնի ուղերձը Մեղուխեշայի մասին, կային ենթադրություններ, որ Սվաճյանը այցելել է նրան բանտում⁵, բայց որ Պոլսում նամակ է ստացվել բանտարկված նալբանդյանից, մեզ հայտնի չէր:

Ուշագրավ է հատկապես բացառիկ այն խանդավառությունը, որով տոգորված են Խ. Օտյանի նամակները, հատկապես երկրորդը: Այդ նամակից երևում է, թե ինչպիսի ցնծություն են ապրել նալբանդյանի ազատության հետ հույսեր կապող մարդիկ:

⁵ Հայկական ՍՍՖ Գիտ. ակադեմիայի Կրականության և արվեստի թանգարան, Թ. Աղաոտյանի ֆոնդ:

⁶ Ա. Մ ա կ ա Ր յ ա ն—Միք. նալբանդյանը և արևմտահայ դեմոկրատիան, Երևան. 1946, էջ 154:

Իսկ ի՞նչ են ղդացել ունակցիոն հոսանքի մարդիկ՝ նման լուրերի ստացման օրերին:

Այդ մասին մեզ որոշ գաղափար տալիս է դարձյալ նույն թանգարանում պահպանվող մի այլ փաստաթուղթ. դա Հ. Չամուռնյանի որդու՝ Զենոբի ստորագրությամբ կրող մի նամակ է, ուղղված հորը՝ Չամուռնյանին: Նամակը բավականաչափ տարօրինակ շարադրանք ունի և կանգնեցնում է մեզ կատարյալ մի առեղծվածի առաջ. ահա այն.

«Սիրելի Աղա Պապա, /

Առանց թվականի գրած նամակդ ընդունեցինք և շատ ուրախացանք կարդալով: Հակոբ սրբազանին տունը եղած Ազգային ժողովը քու կարծյացդ համաձայն չեղավ, կրսեն թե դոնամիշյաններուն ուզածին պես է եղեր: Ուրախ սրտիվ կը ծանուցանեմք, սիրելի Աղա Պապա, որ Նալբանդյանին ազատած ըլլալը սուտ է բոլորովին և ինքը Բեդրսպուրկ բանտն է, կրսեն, և կարծեմ թե հույս չկա ազատվելուն. այս լուրը հանողը շարաճճիկ Մեշուխեշան է: որպեսզի քու փափուկ սիրտդ ցավցունե, բայց դուն անհոգ եղիր մեր սուրբ կրոնքին զորութունովը որչափ այն Նալբանդյանին պես անհավատներ կան՝ պիտի վերնան աշխարհքես իշալլահ: Դուն բոլորովին հանգիստ եղիր, սիրելի աղա պապա, մենք տպարանին աղեկ մուխայեթ կըլլանք կոր և կաշխատինք կոր որ վեց ամիսը մեկ անգամ՝ օրը օրին ՆԵԼԱՆԸ հասցենք: Տուտուիս քյուրքը մարդ չհագնիր՝ ֆեսֆեսե մընեք: Երեկ Ատոմը խբկեցի որ երթա Քարապիպեուի մեխանայեն ճյուպպեդ առնե, բայց. «օնուն պիզե օն իբի պուշուք քուռուշ պոռճու վրա, օնա պեղել ալը քօմուշուգ»⁷ ըսեր վոնտեր են:

Տունը ամենքն ալ աղեկ են. բոլոր ծագերդ ձեռքդ կը պագնեն. տուտուն ալ կարոտով երկու սուռադներդ կը պագնե և կրսե որ շատ կարոտցել է քեզ:

Մնամք անոթութենեն սեղրեիդ յախային եղերը լըզըռտող

Հարազատ որդիքդ

Զենոբ, Տաճատ, Ատոմ

Պր. Տ. Պ. Կարապետյան

Տերոյենց Չամուռնյան

1862, սեպտ. 24

Սկյուտար, Ննի մահալլե,

Հ. Գ. Տպարանը եղելու համար եղ շմնաց, բաբա ալ շիկա որ առնենք, ուստի կաղաչեմ, քուզում աղա պապա, սա քուկին ֆեսիդ քենարի եղերը քերդերի տեխրկերի, որ մեքենան եղենք քիչ մը: Մեր ֆեսերուն քենարը և տուտուիս գլուխը եղ շի մնաց, կեսեն էվելը մեքենային կերուցինք մնացածն ալ անցած իրիկուն տուտուիս մետեն ուզեց աղվոր փիլաֆ մը եփեց կերանք»:

Զենոբ

Գրականության և արվեստի թանգարանում այս նամակը արձանագրված է որպես Տերոյենցի որդու՝ Զենոբի նամակը, ուղղված իր հորը: Բայց արդյո՞ք դրա հեղինակը Զենոբն է: Զենոբը իսկապես որ Տերոյենցի որդին է. մյուս որդիների անուններն էլ ճիշտ են (Ատոմ, Տաճատ), նամակի բովանդակությունն էլ

⁷ Նա մեզ տասերկու և կես դուռուշ պարտք ունի, դրա փոխարեն ենք պահել:

⁸ Հայկական ՍՍՏ Գիտ. ակադեմիայի Գրակ. և արվեստի թանգարան. Թ. Աղատյանի ֆոնդ:

բնական է. Զենոբը կարող էր այդպես խոսել նայրանդյանի մասին, ճիշտ որ Տերոյենցի տպարանի դորժերը այդ տարիներին հանձնված էին Զենոբին: Հնարավոր է նաև, որ նամակագիրը, որ ի դեպ եղել է հարբեցող մի անձնավորություն, իր նամակում խոսելու նաև զինետանը որպես պատանդ պահվող հոր վերարկուի, իր մոր համբույրների և այլնի մասին, բայց կարող էր նա ասել, թե տպարանի մեքենաները յուղելու համար լավ կլինի, որ հայրը ուղարկի իր ֆեսի կեղտը, կարող էր գրել, թե իրենց ֆեսերի եզերքի յուղով փուվ են եփելու կերելու:

Վերջապես ստորագրությունն ու հասցեն էլ կասկած են ներշնչում: Զենոբը կարիք չունի շարելու իրենց բոլոր աղգանունները, մի բան, որ հետազայում անում է Պարոնյանը Տերոյենցին ծաղրելու համար: Լավելի տարօրինակ է նամակի հասցեն, որ հետևյալն է.

Առ մեծահավատ, բազմահավատ
և մեծարելի հայր մեր Հովհաննես
Պատվելի Տ. Կարապետյան Տերոյենց
Չամուռճյան Պրուսացի
Ի Պաղճեճիկ

Մեզ թվում է, որ այս նամակի հեղինակը ոչ թե Զենոբն է, այլ «մեղվականներից» մեկը, գուցե և «չարածճիկ Մեղուխեղան», այսինքն՝ Հ. Սվաճյանը, որի ձեռագրից դժբախտաբար մեզ չի հասել և ոչ մի էջ, որ հնարավոր լինի համեմատելու Ուղարկվել է այն իր հասցեին թե ոչ, նույնպես հայտնի չէ: Բնորոշ է, որ այն պահպանվել է այդ թվերին «մեղվականներին» մոտիկ կանգնած հաշիկ Ստյանի մտերիմ Հովհ. Մկրյանի թղթերում:

Հետագա պրպտումները գուցե ավելի լույս սփռեն իս. Ստյանի և Մ. Նայրանդյանի մտերմական ու զաղափարական կապի վրա: